

## ԴՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԵՒ ԿԵԸՆՔ

### III

ԷՄԻԼ ԶՕՂԱ

(Նրա մահուան առթիւ)

### Ա.

Անցեալ դարու եօթանասնական թուականներին  
Պարիզի ուստորաններից մէկում ամէն կիւրակէ հաւաք-  
ւում էին ճաշի հինգ գրող, որոնցից չորսը Փրանսիացի  
էին, մէկը՝ ռուս։ Մտերմական սերտ կապերով կա-  
պուած էին նրանք. գրականութիւնն էր ալդ մտերմու-  
թեան բարոյական հիմնաքարը, բայց իրանք հանաքով  
ալդ ընկերական ճաշկերու մտերը անուանում էին  
«անլաջողների ճաշեր», որովհետև հինգի պիէսներն  
էլ անլաջողութեան էին հանդիպել բեմի վրայ։  
«Հինգ անլաջողների ճաշերը» վաղուցէ, որ վերջացել են.  
Մտերմական շրջանի անդամները մէկը միւսի ետևից  
յաջորդաբար գերեզման մտան։ Մնացել էր մէկը, բայց  
նա էլ հետևեց ընկերներին և մնաս բարեաւ ասաց  
կեանքի վալելքներին։

Դրանք՝ հինգ երեսելի գրողներ էին՝ Գ. Ֆլորէո,  
Ե. Գոնկուռ, Ա. Դոդէ, Ի. Տուրգենև<sup>1)</sup> և Է. Զօլա։

<sup>1)</sup> Զորսն էլ անցեալ դարու ամենատաղանդաւոր և հըռ-  
չակաւոր վիպասանների շաբթին են պատկանում. չորսն էլ  
ուշալական գրական ուղղութեան ներկալացուցիչներն են.  
Հայ հասարակութիւնը ծանօթ է Դոդէի և Տուրգենևի հետ,  
մինչդեռ Ֆլորէրի և Գոնկուռների (երկու եղբայր միասին էին  
գրում) գրուածքների հետ կարծեմ բոլորովին ծանօթ չէ,

Վերջնիս մահը կայծակի տրագութեամբ տարա-  
ժուեց հազարաւոր լրագրների միջոցով և սարսափելի  
տպաւորութիւն թողեց ամենքի վերալ իր անակնկա-  
լութեամբ և ողբերգականութեամբ։ Ընթերցողը ի հար-  
կէ արդէն լրագրներից գիտէ թէ երբ և ինչից մեռաւ  
Զօլան, ինչպիսի թաղման նա արժանացաւ, ինչպիսի  
ճառեր արտասանուեցին նրա գագաղի վերալ, ուստի  
մենք այդ գէպքերի վերալ կանգ չենք առնի։ Միայն  
ալսքանը նկատենք, որ մահուան լուրը և թաղումը պար-  
զապէս ապացուցեցին, որ աստիճանի մեծ, տիեզերական  
հոչակ էր վալելում Զօլան, որ աստիճանի մեծ անուն  
ունէր նա նրանսիալում, և որ աստիճանի գնահատում  
էր նրան Ֆրանսիալի բուն ժողովուրդը՝ գաւառը, բան-  
ւոր գասակարգը և Պարիզի ինտէլիգէնցիան։ Զօլալի  
մահուամբ—մի մեծ տաղանդ պակասեց մեր միջից, քաջ  
հասարակական մարտիկ և ազնիւ մարդ։

Ինքն իր մասին Զօլան հետևեալն է պատմում։  
«Ես քանից ինքնակենսագրական տեղեկութիւններ եմ  
տուել իմ գրուածքների մէջ, ինչպէս օրինակ՝ «Աև յ ուշ  
de rivere»-ի (կեանքի ուրախութիւն) և L'Օւսուր-ի մէջ,  
ուր ես ինքս ինձ մի քիչ շոյել եմ լանձին Սանդոզի։  
«Ի՞ուգոնի Կարիէրի» և «Պլասսանի նուաճման» մէջ կան  
բազմաթիւ տեղեկութիւններ իմ մանկութեանս մասին։  
—Ծնել եմ ես 1840 թ. ապրիլի 2-ին, սուրբ Յովսէփի  
փողոցում, Պարիզում։ Իմ հայրը, Ֆրանչէսկօ Զօլա, որը  
բաւականի մեծ գիտութեան պաշարի տէր մարդ էր,  
պատկանում էր Վենետիկեան մի տոհմի։ Նրա մայրը  
հելլենուհի էր, ծնած Կորֆու կղզու վերալ։ այսպէս  
ուրեմն՝ իմ արեան մէջ հոսում է երեք տեսակի ա-  
րիւն՝ յունական, իտալական և ֆրանսիական... 1847  
թ. վախճանուեց Հայրս և ես մնացի անօգնական մօրս  
մօտ։ Մեր նիւթական դրութիւնը շատ վատ էր։ Վեր-  
ջապէս ինձ տեղաւորեցին մի փոքրիկ դպրոց «Պանսիօն  
Նոտր-Դամ» անունով։ 1852 թ. ես մտալ գիմնազիօն  
(Մարսէլլում)։ Ես շատ աշխատասէր էի, այնպէս որ  
երրորդ դասարանում առաջին աշակերտն էի համար-  
ւում։ Անուամենալիւ հազիւ թէ իրաւունք ունէի ինձ  
գիտութեանց ընդունակն համարել՝ ես ատում էի լա-

տիներէնը և հանգիստ և բաւականութիւն էի գանում ոտանաւորներ և կոմեդիաներ յօրինելում, և մինչեւ իսկ սկսեցի մի մեծ վէպ գրելու: 1857 թ. ձմեռը մեռաւ իմ մեծ մալրը. մեր չքաւորութիւնը հասաւ այն աստիճանին, որ մենք ստիպուած եղանք ծախել-ծախծինել մեր բոլոր կահ կարասիքը և բազդի ու օգնութեան ետևից տեղափոխուել Պարիզ: 1858 թ. ես Պարիզ էի արդէն ուր սկսեցի յաճախել Սէնլունի: Լիկէօնը: Իմ ընկերները վրաս ոչ մի ուշադրութիւն չէին դարձնում, որովհետեւ ես աղքատ էի: Թոքերի բորբոքումից բժշկուելուց յետոյ ես աշխատեցի վերջնական քննութիւններս տալ, բայց կտրուեցաւ «գրականութեանը անընդունակ» լինելուս պատճառով: Դա մեծ հարուած էր ինձ համար, որովհետեւ ես զրկում էի օրինաւոր տեղ ստանալու յախից: Ստիպուած ես բաւականացալ գրագրի պաշտօնով, 60 ֆր. ամսականով, թէպէտ և ալդ պաշտօնի մէջ ես երկու ամսից աւել չմնացի:—Յետոյ սկըսուեց ինձ համար մի սարսափելի կեանք՝ գտարկ ստամբուլ և լի պարտքերով: Ես այն աստիճանի կարութիւն էի կրում, «որ բազմիցս իմ ամբողջ օրուայ սնունդս բաղկացած էր լինում մի կտոր «պանրով-հացից», կամ խնձորից, շագանակից կամ գետնախնձորից: Երկու տարի անընդհատ եւ ալդպէտ կեանք էի վարում: Ալդ միջոցին ես ունէի միայն մի սիւրտուք, որը սկզբից սև էր, յետոյ կանաչեց և վերջապէտ բոլորովին դեղնեցաւ: Այնուամենախիւ երիտասարդութիւնն անօթի էլ որ լինի էլի երիտասարդութիւն է և երջանիկ ժամանակ: Մարմնի համար կերակուր չկար, բայց հոգեկան կերակուր միշտ գտնուում էր, որով սակայն երբէք չէի կարող կշտանալ... Վերջապէտ կարիքներից բոլորովին ջատուած—1862 թ. ես գործակատարի պաշտօն յանձն առի 100 ֆրանք ամսականով: Իրիկունները ես լիովին նուիրում էի լուրջ գրական աշխատանքների: Երբ դրութիւնա մի քիչ բարւոքուեց—ես բնակուեցալ արդէն մօրս հետ միասին և շատ համեստ կեանք սկսեցի վարել: Իմ առաջին գրական աշխատանքներից Գուտես և Նիոնու (Պատմուածքեր Նինոնի համար)՝ ինձ փող չբերեց, բայց ծանօթացը հասարակութեանը իմ անուան հետա-

Զօլալի ինքնակենսագրական ակնարկից մէջ քերի ալս փոքրիկ կտորը, որպէս զի ընթերցողը հեղինակից, իրանից, լսած լինի նրա կեանքի առաջին քալլերի մասին:

Զօլալի գրուածքները արդէն 1859 թուականից լոյս էին տեսնում - ալս ու այն թերթի մէջ, բայց անդրանիկ գրական գործը «Contes à Ninon»-ը լոյս տեսաւ 1864 թ.: Դրանից յետոյ սկսում են Զօլալի համար աւելի ևս դժուար տարիներ, որովհետև «անուն» վաստակել շատ աւելի դժուար է, քան փող: Զօլան ոչ մի անլա ջողութիւնից չի վհատում և շարունակ գրում է՝ լուրեր, յօդուածներ, վէպիկներ և վէպեր, որոնցից մի մասը լոյս է տեսնում մէկ ալս մէկ այն լրագրի կտմ ամսադրի մէջ: Նա չի վհատում և շարունակում է իր գրական աշխատանքը, չնայած որ արդէն ընթերցողների որոշ մասը զարհուրանքով է երեսը շուռ տալիս նրա անզուսպ, ցինիկական և լամեն-ոյն դէպս անկախ գրական ուղղութիւնից:

Մի քանի անգամ այն թերթի ընթերցողները, որի մէջ տալում էր Զօլալի վէպերը կամ յօդուածները, յալտնում էին իրանց զայրոթը և ստիպում էին խմբագրութեանը դադարեցնել Զօլալի աշխատութեան ապագրութիւնը: Ալդ տեսակ սկանդալները ակամալ ժողովրդականցնում էին նրա յամառութիւնը, որը միացած տաղանդի և աշխատասիրութեան հետ լաղթեց հասարակութեան անտարբերութեանը և հեղինակի ճակատը պսակեց փառքի անժառամ պսակով: «Contes à Ninon»-ոյն նա սկսեց իր գրական գործունէութիւնը (1864), «Թէրէզ Ռակէնով» իր վրայ ընթերցողների և հասարակութեան ուշադրութիւնը գարձեց (1867), իսկ «Թուգուն - Մակառի տոհմի պատմութիւնով» (1869 ից) առաջնակարգ վիպասանի և գրական վերանորոգիչի անուն վաստակեց, մի անուն, որը տարեց տարի աւելի և աւելի ժողովրդականութիւն էր ստանում ոչ միայն հեղինակի հալլենիքում, այլ և ամբողջ աշխարհում, ուր որ տարածում էր արևմտեան Եւրոպալի գրականութիւնը: Հետևեալ թուերը լաւ կառող են ցոյց տալ, թէ որ աստիճանի են տարածում

Զօլալի վէպերը. ամէնից շատ տարածուել է «Կոտորածը» — 207,000 օրինակ, երկրորդ տեղը բանում է «Նանայան» — 193,000, «Լուրդ» — 164,000, «Հողը» — 129,000, «Germinal» — 110,000, «Մարդգառն» — 99,000, «Հռոմ» — 106,000, «Դոկտոր Պասկար» 90,000 և այլն և այլն։ Ուստի Մակառների սերիալից ամենաքիչը ընդունելութիւն ստացող վէպն անգամ 32,000 օրինակ է տարածուել։ Սրա վերալ աւելացրէք և այն բազմաթիւ և բազմահատոր թարգմանութիւնները, որոնք տեղի են ունեցել Ուստաստանում և ալլուր։ Հազիւ թէ մի այլ հեղինակի գրուածքները այսպիսի կարճ ժամանակում ալդքան տարածուած լինեն։ Հաշուեցէք ալժմ՝ քանի միլիոն ընթերցող է ունեցել է։ Զօլան իր կեանքում։ Այսպէս ուրեմն մի մարդ, նստած իր կաքինէտում հաջորդակցում է ամբողջ աշխարհքի ընթերցողների հետ, որոնց թիւը միլիոններով է հաշուամ։ Այսպիսի մի մարդու ազդեցութիւնը անշուշտ մեծ է և ինչպէս և ամեն տեսակ ազդեցութիւններկանը։ Ուստի քննադատը և պատմաբանը իրաւունք ունի հարց տալու և տեղեկանալու՝ արդեօք ի՞նչ ազդեցութիւն էր գործում Զօլան՝ դրական թէ բացասական, արդեօք պէտք է խրախուսուի ալդ ազդեցութիւնը թէ ոչ։ Ի հարկէ ալդ հարցերին ամէն մի հարցնող իր տեսակէտից է պատմախան տալիս և որովհետև տեսակէտները բազմազան են, պատմախաններն էլ բազմամեռակ են, կան քննադատներ, որոնք Զօլալի ազդեցութիւնը ուղղակի վնասակար են գտնում, և ընդհակառակը պակաս չեն քննադատներ, որոնք ասում են, թէ Զօլան ազդում է ընթերցողի վերալ հէնց այն ուղղութեամբ, որ ուղղութեամբ պէտք է ազդէ ամէն մի ժամանակակից գրող։

Զօլալի ազդեցութեան որպիսութեան մասին խօսելուց առաջ պէտք է ծանօթանալ նրա գրական գործունէութեան հետ, որին և կդիմենք մենք հետևեալ գլխում։

## Բ.

Ոչ մի վիպասան այնքան շատ և հիմնօրէն չի

սել իր ուղղութեան, գաղափարների, նպատակների, գրելու ձևի, հեղինակի կոչման, վէպի նշանակութեան մասին և ալլն - որքան էմիլ Զօլան: Գրական առաջարից վերալ ոտք կոխելուց սկսած մինչև իննոնական թուականները նա իր փոքրիկ լրագրական յօդուածներով ու մեծ ու լուրջ հրապարակախօսական — քննադատական գրուածքներով լիովին սլարզեց թէ ինչ է նա պահանջում գեղարուեստից և գրականութիւնից<sup>1)</sup> և ալդ ճիւղերին նուիրուած մարդկանցից: Մի տեղ Զօլան ասում է՝ «Ամենաերկարամատուցիչները մեզնից կլինեն ոչ թէ նրանք, որոնք ձգտում էին լաւացնել մարդուն, ալլ նրանք, որոնք նկարագրում էին նրան (այսինքն մարդուն), որպէս նա է, իր Փիզիկական բոլոր ճշտութեամբ»: Այս խօսքերը շատ բնորոշ են Զօլալի համար. նրանք շատ բան բացատրում են և լիովին համապատասխանում նրա բռնած դիրքին և ուղղութեան:

Ցիշեցէք, որ նա սկսեց գրել 60-ական թուականներին, երբ գրականութեան մէջ տիրապետող ուղղութիւնը — ուօմանականը էր, թէպէտ և գրական մակերեւութիւնը վերալ արդէն երևացել էին հակառակ ուղղութեան տէր գրողներ թէ տէօրէտիկներ (քննադատներ և փիլիսոփաներ) և թէ վիպասաններ: Ուոմանտիզմի գլխաւոր նպատակն էր ոգեսորել ուրիշին գաղափարով, իդէալով. բարձրացնել և լաւացնել մարդուն. յափշտակել նրան առօրեալ չար ու բարիից և գեղեցիկ ու երջանիկ, բայց գոլութիւն չունեցող աշխարհում բնակեցնել: Այստեղից բղխում են արդէն անդառնալի անցեալի իդէալականացումն, ցնորքներ ապագալի մասին, վերացականութիւն և անբնականութիւն: Կեանքի հետիր ամբողջ գոյութեամբ կապուած մարդուն — ուօմանտիզմը աշխատում էր կեանքից կտրել:

Շատօբրիան, Լամարտին, Միւսսէ, Հիւգո-ուօմանականմի ամենաերկարամատուցիչները — գիտակցարար թափառում էին անուրջների մէջ, երկնալին եթերում, առանց շփուելու իրական կեանքի հետ՝ մի գուցէ կեղ-

<sup>1)</sup> Տես նրա «Le Roman expérimental» (Փորձնական վէպը) և «Փարիզեան նամակները».

տուտուեն նրա անմաքուր կողմերով։ Այդպիսով իրական ճշմարտութիւնը զոհ էր բերւում մտացածին ուղղութեան, որը կարելի է ամփոփել Լամառտինի հետւեալ խօսքերի մէջ<sup>1)</sup>։ «Բանաստեղծութիւնը վերածնուրմ է, որպէս դուստր հիացման և ոգևորութեան, դառնում է իդէալական և խորհրդաւոր արտայայտութիւն այն ըուրարի, ինչ որ մեր հոգու մէջ գոյութիւն ունի իբրև երկնալին և խօսքերով անբացատրելի, նա (բանաստեղծութիւնը) պատկերացնում է ներդաշնակ ձեռով մարդկային ոգու տանջանքները և հրապուրները։ Սեթևեթ լիզուով արտասանուած այս միտքը շատ ընորդ է ոօմանտիկ ուղղութեան համար, որի սիւներից մէկն է այս նախադասութեան հեղինակ Լամարտինը։ Եւ ինչպէս որ այս վերացական ուղղութիւնը երևան եկ ու երբեք օպազզիցիայ կեղծ-դասական ուղղութեան, ինչպէս որ ոօմանտիզմը գրականութեան մէջ մտցրեց նոր, աւելի լայն և մինչև իսկ անզուսպ հոսանք, փոխարէն կեղծ ու կլասիկ չոր ու ցամաք, հաշուած կշուռած կարգ և կանոնների—այնպէս էլ ոօմանտիկական ուղղութեան դէմ առաջացաւ նոր ուղղութիւն։ Ոօմանտիզմը հակապատկեր էր կեղծ-դասականութեան՝ նա չէր ընդունում կեղծ դասականութեան էական պահանջները, նա լայնացնում էր բանաստեղծի ոգեսորութեան շըջանը, նա մտցնում էր գրականութեան մէջ հեղինակի «եսը», նա վերացական մոռիչքներ էր անում և այլն։ Նոյնպէս և ոօմանտիզմի փոխարէն եկող ուղղութիւնն էլ իր նախօրդի հակապատկերն էր, բայց ուրիշ տեսակէտից։

Մինչ ոօմանտիկները (թէ կեանքի և թէ գրականութեան մէջ, թէ գիտութեան և թէ գեղարուեստի) իդէալական աշխարհի ետևից էին ընկած և գոյութիւն չունեցող մարդիկ էին նկարագրում անբնական հոգեբանութիւններով՝ գիտութիւնը սակաւ առ սակաւ սկսալ ղեկավարողի գիրք բռնել և բնական գիտութիւնների հիման վերայ ցոյց տալ իսկական մարդուն, նրա լաւ և վատ կողմերով։ Միւնոյն ժամանակը և քաղաքականութիւնը ցոյց տուեց ոօմանտիկ երազների վնասակար ազ-

<sup>1)</sup> 1830 թ. նրա արտասանած ճառից։

դեցութիւնը ժողովրդի քաղաքացիական զգացմունքների վերալ, որովհետև ումասնտիզմը մարդուս աչքերը փակել էր տալիս երևակալութեան տուաջ և քաղցր մեղեղիներով քննեցնում էր նրան։ Գիտութիւնը և քաղաքական հանգամանքները դրդում են մտաւոր գործիչներին—որ ասպարիզի վրայ էլ նրանք կանգնած լինեն—երկնքից իջնել երկիր, վերացական էակի փոխարէն ուսումնասիրել և պատկերացնել իսկական մարդուն. վերացականութեան փոխարէն նոր ուղղութիւն իրեն հիմք դրեց ի ր ա կ ա ն ո ւ թ ի ւ ն ը։

Եւ ինչպէս որ ումասնտիզմը արձագանք գտաւ թէ բանաստեղծութեան և թէ վիպաշանութեան մէջ, թէ ճարտասանութեան (Լակորդէր) և թէ փիլիսոփալութեան, թէ պատմութեան (Միշլէ) և թէ սօցիալական գիտութեան մէջ<sup>1</sup>), նոյնպէս և ռէալականութիւնը ունեցաւ իր ներկալացուցիչները լանձին Պրուդօնի, Կոնտի, Կլօդ-Էէրնարի, Կուրբէի, Տէնի և ալլոց—փիլիսոփալութեան, բարոյագիտութեան, սոցիօգիալի, բնագիտութեան, նկարչութեան, քննադատութեան և պատմութեան մէջ<sup>2</sup>): Մարդկալին մտաւոր գործունէութեան բոլոր ճիւղերի մէջ երևան եկան ումասնտիզմի դէմ բողոքողներ։ Վէպի մէջ ալդ բողոքը սկսեցին Մեռիմէ, Ստէնդալ, Բալզակը և Գլօբէուր։ Սակայն բողոքը աւելի կրաւորական էր—եթէ կարելի է արդակս ասել—քան ներգործական։ Նրանք կարծես բնազմամբ, անգիտակացրար ռէալականութեան կողմն են թեքւում, թէպէտ և կոիւ չեն սկսում արդէն մեռնող ուղղութեան դէմ։ Նրանք լոելեալն տալիս են նոր, ռէալական ուղղութեան նմուշներ վէպի մէջ՝ Մէռիմէ (1803—1870) իր նովելլաներով, Ստէնդալ (Անրի Բէլլ 1776—1844) իր

<sup>1)</sup> Ուսմասնտիզմի մասին տես Դաւիթ Սօվածօի գեղեցիկ լողուածը Պարի Դէմիւլվիլի «Փրանս. նորագոյն գրական. պատմութեան մէջ»։ Ուսերէն թարգմանութիւնը արել է Ի. Վեսելովսկին։

<sup>2)</sup> Նորին Դ. Սովածօի, «Ռէալիզմ և Նատուրալիզմ» ուսումնասիրութիւնը մասնամասն քննումէ ալդ ուղղութիւնների ծագումը, արտաքարտութիւնը զրականութեան և զեղարուեատի մէջ, նրա դաւանանքը, դերը և նշանակութիւնը։

«Պառմի վանք»-ով և «Կարմիր ու Սպիտակ»-ով, Հոնորէ դը Բալզակ (1799—1850)՝ իր «Մարդկային կառակեր» գութիւն»-ով, վերջապէս Գիւտաւ Ֆլօբէր (1821—1880) իր նշանաւոր «Ճիկին Բովառի»-ով:

Սակայն այդ նոր ուղղութեան իսկական հիմնադիրը—իրաւամբ համարւում է Է. Զօլան, որը իր ժատունական և պատկերահանդէսների ուցէնզիաներով, իր գրական քննադատութիւններով, իր յօդուածներով՝ «Ծմատելութիւնները», «Փորձնափական վէպը», «Փարիզեան նամակները» և բազմաթիւ վէպերովը—պատերազմ հրատարակեց ումանտիզմին և նոր ուղղութեան դաւանանքը տուեց: Նա համարձակ ասաց այն, ինչ որ շատերը զգում էին, բայց սիրո չունէին արտասանելու և իբրև տաք գլուխ երիտասարդ անդառնայի մղուեց այդ երկու ուղղութեան կոռուի մէջ:

Նա լաղթող հանդիսացաւ թէ իր տաղանդի ու աշխատասիրութեան շնորհիւ և թէ այն պատճառով, որ ժամանակ ին սկսեց իր կույտ և նոր գաղափարի քարոզը: Յամենայն դէպս նա տապալեց ումանտիզմը և կեանք տուեց ուշական ուղղութեանը գրականութեան մէջ:

#### Գ.

Զօլան սկսելով իր գրական կուրը տիրապետող ու մանտիկ ուղղութեան հետ իւր նոր ուղղութիւնը կնքեց նատուրալիզմ (բնապաշտութիւն) անունով: Ինչու նատուրալիզմ և ոչ ուշալիզմ, որը աւելի պարզ և հասկանալի է—այդ բանը որպէս հարկն է չբացատրեց Զօլան: Այսպէս թէ այնպէս գրական այդ նոր գպրոցը, որը գալիս էր ընոր խօսք» ասելու նատուրալիստական կոչուեց: իսկ Զօլան նատուրալիզմի հալլ և գլխաւոր ներկալացուցիչ: Մինչդեռ ըստ էութեան Զօլայի հիմնած կամ աւելի լաւ է ասած պահանջած նատուրալիզմը ոչնչով չի զանազանւում այն գրական ուղղութիւնից, որ միշտ գոյութիւն է ունեցել թէ կլասսիկ շրջանի մէջ, թէ միջին դարերում, թէ նոր և թէ նորագոյն<sup>1)</sup>, և որը միշտ կոչում

<sup>1)</sup> Բօկկաչիոն (XIV դ.), Ոուբլէն (XVI դ.), Լէսսամբը

էր ուշալիզմ, ալսինքն իրական ուղղութիւն, Ուշալիզմի կողքին ստեղծել մի այլ գրական տէրմին, որպիսին է նատուրալիզմ, որը ոչնչով չի զանազանում ուշալիզմից—կնշանակէ մարդ շփոթեցնել և նոր բան ասած լինել, առանց նոր բան ասելու։ Կարծում եմ, որ Զօլան էլ, իբրև երիտասարդ, գրականութեան մէջ գեռ անլատ, բայց փառքի փափագող և յամառ մարդ—կամտւ ուղեցել է ուժանտիզմին հակառակ երթալու համար նոր անունով ուղղութիւն հրատարակել։

Նատուրալիզմի և ուշալիզմի մէջ զանազանութիւն չի կարողացել ցոյց տալ ինքը Զօլան էլ. քննադատներն էլ զանազանութիւն չեն տեսնում, կամ երբ ուզում են տեսնել և բացատրել, տալիս են մտացածին բացատրութիւններ և որոշումներ։ Այսպէս օրինակ Դաւիթ Սօվածօն երկուսի մէջ միայն այն զանազանութիւնն է տեսնում, որ ուշալիզմը մարդուն, բնութեան և կեանքին հաւատարիմ մնալով՝ ծառալում է որոշ գաղափարի (օրինակ բարոյական, սօցիալական և այլն) իսկ նատուրալիզմը—առանց նպատակի ինքնարերաբար պատկերահանում է բնութիւնը, մարդուս կեանքը, և առհասարակ ամեն ինչ, որ գոլութիւն ունի և կարող է պատկերահանուել։

Սակայն եթէ այս տեսակէտից նայելու լինինք նատուրալիզմի վերալ, այն ժամանակ Զօլալի քսան հատոր Ուուգոն. Մաքառը, նրա «Երեք քաղաքը», նրա «Չորս Աւետարանը» անտարակոյս նատուրալիզմի շրջանից դուրս կմնան, որովհետև Զօլան իր արդ երեք տեսակի վէպերովն էլ որոշ նպատակի էր ծառալում, որոշ գաղափար էր արծարածում։ Մի հեղինակ կարող է իլ գաղափարը Հէնէի նման չորս տողի մէջ ամփոփել, միւսը—Զօլալի նման—մի շարք ստուար հատորներով է իր գաղափարը լայտնում։ Դա ճաշակի, բնաւորութեան և համոզմունքի խնդիր է։ Ճշմարտութեանը մօտեցած կլինենք գուցէ, եթէ ասենք, որ նատուրալիզմը—ուշալիզմի տեսակն է, ձեն է։ Բայց եթէ նատուրալիզմը ուշալիզմի տեսակն և

(Ժիլլազի հեղինակը, (XVIII դ.), Ուշիք Դէլաբրէտոնը (XVIII դ.), և ալլն—իսկական ուշալիզմի ներկայացուցիչներ են։  
ԼՈՒՄԱՑ

ձեն է, էլի կարող չենք ասել, որ Զօլան առաջինն է ալդ ձեռվ գրողների թւում: Նա միայն գիտակցորէն սկսեց գրելու ալդ ձեռվ, համոզուած, որ ժամանակը (դարը) պահանջում էր, որ ալդպէս գրուէին վէպերը և վերջապէս յամառ կերպով պաշտպանում և ժողովրդականացնում էր իր գաղափարը՝ գրական նատուրալիզմի անհրաժեշտութեան մասին<sup>1)</sup>:

Չտեսնելով էական զանազանութիւն ալդ երկու նոյնանման ուղղութիւնների մէջ, այնուամենալին պահպանենք Զօլայի սիրած նատուրալիզմ անունը այն գրական ուղղութեան համար, որը տիրեց ասպարէզը ուժանտիզմից լետոյ, որի առաջին ներկայացուցիչները Փրանսիական վիպագրութեան մէջ Բալզակն և Ֆլորէրն էին, որը իր լաղթանակը տօնեց Զօլայի շնորհիւ, և տուեց Գոնկուրների, Մօպասսանի և Թօդէի նման նոր ուղղութեան գրողներ:

Կեղծ-գասական գրականութիւնը Բուռլոյի և նրա երկրպագուների շնորհիւ կաշկանդել էր մի ժամանակ Փրանսիական գրականութիւնը: Իր մանրամասն կանոնագրքով, «Երեք միութիւններով», նիւթերի ընտրութիւններով ու անմիտ խարութիւններով՝ սպանել էր երեւակալութիւնը, առաջացրել էր գրականութեան մէջ «արհեստ» - գեղարուեստի փոխարէն, մանէկէններ էր ստեղծել կենդանի գործող անձանց փոխարէն, կեղծ ոգևորութիւն բնական զգացմունքի փոխարէն: Եկաւ ուժանտիկ ուղղութիւնը և լեղափոխութիւն առաջացրեց գրականութեան մէջ: Նա ոչնչացրեց երեւակալութեան սահմանները, և ամեն ինչ ենթակալ արաւ բանաստեղծի ոգևորութեանը. Նա հետաքրքրուեց ներկայով, առանձին ուշք գարձրեց մարդկալին «Ես»-ի վերայ և սրտի ու հոգու խորքերից հնչեցրեց քաղցր, շատ անգամ տիսուր, միշտ զգացուած մեղեդիներ: Բայց նա չկամեցտ ի մօտոյ ծանօթանալ կեանքի հետ, տալ կենդանի մարդու պատկերը, բացատրել սրտից բղխած

<sup>1)</sup> Ալդ պրոպագանդալի գործում Զօլան ուսուցիչ է ունեցել լանձին վիպասան Դիւրանտիի, «Ռէալիզմ» ամսագրի խմբագիր հրատարակչի: Զօլան ալդ ամսագրի աշխատակիցներից մէկն էր:

տիրերգի բուն պատճառը։ Նրա նկարագրած կեանքը թէպէտ և թափանցիկ, բայց էլի քողով էր ծածկուած։ Նրան վախեցնում էին իրական կեանքի անպիտան կողմերը, որովհետեւ նա գեղեցկի սիրահար էր՝ գեղեցկից բանստեղծութեան մէջ, նրանց ասելով, բարձրացնում է մարդուն առօրեալ անտանելի վիճակից դէպի իդէալական աշխարհը և այնտեղ սփոփում է նրա վէրքերը, բաւականութիւն է պատճառում, երջանկացնում է։ Ուօմանտիզմը չէր ծածկում, որ կեանքի մէջ վատը յաղթող է լաւին, որ երչանիկները հազու ագիւտ են, իսկ զգալուն սրտի տէր և անբաղդ մարդիկ՝ անժիւ-անհամար. ընդհակառակը նրանք սիրում էին իրանց բանստեղծութիւնների առարկան մարդու չար բաղդը, հիասթափումը, յուետեսութիւնը, յուասհատութիւնը անել։ Բայց նրանք չէին ցոյց տալիս մի իրական ելք ալդ գրութիւնից. ալդ նրանց գործը չէր։ Եւ չէին էլ կարող ոչ մի ելք ցոյց տալ, քանի որ նրանք ծանօթ չէին կեանքի հետ, նրանք կեանքը չէին ուսումնասիրած և չէին ուղղում ուսումնասիրել։

Զօլան ոգեսրուած էր դրական փիլիսոփայութեամբ և ընական գիտութիւնների տուած արգասիքներով։ Նա կեանքի մարդ էր և տեսնում էր, որ անհիմն երազանքներով տուն չի շինուիլ։ Նա ուղղակի պահանջ դրեց, որ գրականութիւնը միմիայն և ելժ իրականութիւնով զբաղուի։ Կիսասանը պէտք է տայ կեանքի իսկական և ոչ թէ միակողմանի պատկերը։ Ուօմանակները երեսները շուռ էին տալիս կեանքի մէջ տգեղ, մոալլ կամ անսպիտան պատկերներ չտեսնելու նպատակով, ուստի նրանց գրականութեան մէջ կեանքը իր մի կողմազն է արտափալլում, մինչդեռ գրականութիւնը միայն այն ժամանակ կրթիչ նշանակութիւն կարող է ունենալ, երբ նա ճշմարտորէն ամեն ինչ նկարագրէ և լաւը և վատը, և գեղեցիկը և տգեղը։ Դրականութիւնն էլ գիտութեան նման մեզ պէտք է որոշ բան սովորեցնէ, որոշ եղբակացութիւնը անէ։ Իսկ ինչպէս կարող է գիտականը միակողմանի դատողութիւններով ճիշտ եղբակացութեան գալ։

Հեղինակը պէտք է գիտնականի նման ուսում-

նասիրէ այն բնութիւնը, կեանքը և մարդկանց, որն ուզում է նկարագրել: Ուսումնասիրել կարելի է անմիջապէս տեղն ու տեղը և կամ որոշ գոկումէնտների միջոցով, նստած իր սենեակում. Պէտք է, որ վիպասանը երկու միջոցներին էլ գիմէ: Իրան հարկաւոր նիւթ երը ուսումնասիրելուց յետոյ—հեղինակը որոշ դասաւրութիւններ ու փորձեր անելուց յետոյ կարող է գալ որոշ եղբակացութեան այս կամ այն խնդրի վերաբերմամբ, օրինակ նա կարող է ուսումնասիրել մի որ և է անհատի ծագումը, բնաւորութիւնը, այն միջավարը, որ ապրելու է, այն հանգամանքները, որի մէջ ընկնելու է—և կարող է գուշակել կամ «եղբակացներ» այդ մարդու կեանքը, անելիքը իր կեանքում, ճակատագիրը: Եւ այդ եղբակացութիւնը այնքան ճիշտ կլինի, որքան աւելի նիւթեր ունի հեղինակը իր ձեռքի տակ, որքան աւելի հիմնօրէն ուսումնասիրել է նա այդ նիւթերը: Այսպէս պէտք է ստեղծուի «Փ օ ր ձ ն ա կ ա ն ա վ է պը», որը ուրիշ գիտական փորձերի նման մարդկութեան ուղեցույց է լինելու: Վիպասանը, ուրեմն, գիտնականի դեր է կատարելու և իբրև գիտնական բոլորովին օբյեկտիւ պէտք է լինի՝ նա անաշառ կերպով պէտք է նկարչը այն ինչ որ կայ և անէ այն եղբակացութիւնը, որը թելադրում են նրան նիւթերը, գոկումէնտները ու կեանքի իրական հանգամանքները: Վիպասանի նպատակը—գիտնականի նպատակ է լինելու՝ ոչ թէ լաւացնել մարդուն, այլ նկարագրել նրան այնպէս, ինչպէս որ նա է: Խոկ եթէ հեղինակը սկսէ ուսումնասիրել կեանքը, նա կտեսնի, որ իրականութիւնը գժոնք է և ոչ թէ ուօմանտիկների պատկերացրած արքալութիւնը. որ մարդս-գաղան է. որ ապականութիւնը ընդհանուր է. որ նիւթականը գերակշռող դեր է կատարում կեանքի մէջ. որ անառակութիւնը, ժլատութիւնը, սնափառութիւնը — որքան էլ ալլանդակ երևոյթներ լինեն, այնուամենալ նիւթառութիւնը ընդհանրացած են և մարդուս «երկրորդ բնութիւն են» կազմել: Ապա ուրեմն անաշառ և ճշմարտութեանը հաւատարիմ մնալ ցանկացող հեղինակը ստիպուած է լինելու զբաղուել աւելի կեանքի տգեղ կողմելով, մարդուս գաղանալին հակումներով: Զայէտք է

վիպասանը մոռանալ և այն, որ անհատը մի հիւլէ է մարդկութեան, ազգի կամ ամբոխի մէջ, ուստի չպէտք է բաւականանալ անհատի հոգեբանութիւնը ուսումնասիրելով և նկարագրելով, ալ պէտք է տալ և մասսալի պատկերը, կեանքը, հոգեբանութիւնը: Ի վերջ ամենալինի—հեղինակը իր գրուածքի մէջ չպէտք է երևալ. նա չպէտք է խօսի. նրա փոխարէն պէտք է խօսեն գործող անձինք և փաստերը: Ուրեմն ոսմանտիկների «ես»ի փոխարէն, որ արտափալլում էր նրանց ամեն մի գրուածքի մէջ—Զօլան առաջարկում է «անդէմ» հեղինակութիւն, ինչպէս մի սառնարիւն գիտնական հետազօտութիւն...:

Ստկայն, որովհետեւ միշտ ուելի հեշտ է ծրագիր կազմել, քան գործադրել ալդ ծրագիրը, աւելի հեշտ է տալ որոշ տէօրիա, քան թէ պրակտիկալով արդարացնել այն, և որովհետեւ ասելը աւելի հեշտ է քան անելը—Զօլան իր գրականական գործունէութեան ընթացքում իր «գաւանանքի» շատ կէտերից շեղուեց՝ թէ կամալ և թէ տկամալ:

Ընդհանուր առմամբ նա ի հարկէ հաւատարիմ մնաց նատուրալիստական ուղղութեան գլխաւոր պահանջներին, և ալդ գէպքում բացի համոզմունքից մեծդժեր խաղաց նրա լամառ բնաւորութիւնը, նրա կամքի գորեղ ոլժը, տոկունութիւնը և տշխատասիրութիւնը: Բժիշկ Տուլուզը սրանից մի քանի տարի առաջ կամենալով ստուգել Լամբրոզոյի տէօրիան, թէ հանճարները միշտ մօտ են լինում հոգեպէս հիւանդներին—ուսումնասիրեց Զօլային բժշկի տեսակէտից և գտաւ նրան լիովին առողջ՝ թէ մարմնով, թէ ուղեղով և թէ հոգւով: «Զօլայի ամբողջ կեանքը, ասում է Տուլուզը, փալլուն ապացուց է գաղափարի հզօրութեանը մարմնի վերաբերմամբ, և կամքի—տկարութեան վերաբերմամբ»:

Իր ալդ լատկութիւնների շնորհիւն է, որ Զօլան կարողացել է նորմալ կեանք վարել և սիստեմատիկ կերպով աշխատել: Ամեն օր պարապելով և ամէն օր մի քանի երես գրելով—նա կարողացաւ տալ միուգոն-Մակու սեռիալի քսան ահագին հատորները, «Երեք Քաղաքի» երեք գրքերը, «Չորս Աւետարանից» երեքը և բացի ալդ էլ մի քանի հատոր ուրիշ գրուածքներ:

### ՄԻՆԱՍ ԲԵՐԲԵՐԵԱՆ

(Վերջը հետեւեալ համարում)